

1804ին Ապու Մէրազ կը վերադառնայ Յոպպէ և ամէն ոք սարսափահար կը մնայ. սն դարձեալ կ'սկսի իր անիրաւ պահանջները. 200 քսակի փոխանակագիր մը կ'ստանայ Ղազար վրդէն Պոլսի փոխանորդին անուան. այս գումարը անբաւական համարելով՝ 100 քսակ ևս կ'աւելցնէ, ընդ ամենն 300 քսակ պատրիարքին ծանրագին ընծաներէն ու պարզեաներէն զատ, 150 քսակ պատրաստ դրամ կ'ստանայ. և սպառնալիքով կ'ազդարարէ՝ որոնց որ պէտք է, շուտով Պոլիս գրել՝ վերոյիշեալ գումարը վազընդփոյթ վճարելու համար. հակառակ պարագային կը յոխորտայ քանդել վանքերը ու նեղել ժողովուրդը. միևնոյն խտուրթեամբ կը կողպատէ ուխտաւորները: Բայց 1805ին, երբ Ապու Մէրազի փոխանակագիրերը Պոլսէն անվճար ետ կը դառնան՝ այդքան զրամներու վճարումը անկարելի ըլլալուն համար, կ'սկսի չարչարել Յոպպէի վանականները ու դրամ կը պահանջէ անոնցմէ, միևնոյն կերպով կը վարուի նաև ուխտաւորներուն հետ: Վանքերու բոլոր տեսուչները փախան. միայն Յոպպէի տեսուչ Ղազար վարդապետ փախուստի հնարք չգտնելով՝ մատնուեցաւ բռնաւորին ձեռքը. ան գանակոծելէ ու խոշտանգելէ յետոյ 25,000 դահեկանի ծախեց զանիկա Տիլի կոչուած զինուորներուն. Թէոդորոս պատրիարք այս ցաւալի լուրը առնելով փրկանաւորեց զանիկա. Ղազար վրդ. ալ պահապան զինուորներուն կաշառք տալով հազիւ կարողացաւ երուսաղէմ փախչիլ: Ապու Մէրազ ժամանակ մը ևս իր բռնութիւնները չարունակած է և փախած է Գամասկոսի կողմերը: Նամակագիր մը կ'ըսէ այս զարկի Ապու Մէրազի համար. «զի ոչ եթող տեղիս զոր ոչ աւերեաց՝ և ոչ զոք՝ զոր ոչ մատնեաց ի տուգանս, մինչև զկանայս և զմայրն իւր իսկ զլիսովին»:

Հայ-երուսաղէմի պատմիչներուն կողմէն Յոպպէի Ս. Նիկողայոս վանքին մէջ 1772-1805 պատահած վերոգրեալ քամոնելի դէպքերը համառօտելով կը դիտենք որ՝ մասնաւորապէս 33 տարիներու այս շրջանին՝ նոյն վանքին տեսուչներն ու վանականները կատարեալ մարտիրոսութեան մը ենթարկուած՝ արիաբար կուրծք տուած են փրկել վանքն ու եկեղեցին տիրող բռնապետներու ըզքտող ճիրաններէն՝ անտարակոյտ աջակցութեամբ պատ. Միաբանութեան: